



Ք Ա Ր Ո Ձ

ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆԸ¹

 Բբ վերնատուն կըսեմ պետք է՝ հասկնալ հասարակ տան կամ շենքի մը վերնահարկը: Այս բառով ես կհիշեմ այն «վերնատունը մեծ և զարդարյալ», ուր Հիսուս վերջին ընթրիքն ըրավ իր աշակերտներուն հետ, Սուրբ Հաղորդութեան խորհուրդն հաստատեց. և սիրտ կտակն ավանդեց անոնց: Կհիշեմ նաև այն վերնատունը՝ ուր Հիսուսի աշակերտները և մի քանի հավատացյալ կիներ Հիսուսի պատվերին համաձայն, Անոր երկինք համբառնալէն վերջ հավաքվելով կաղտթեին ամեն օր և կսպասեին այն մեծ շնորհքին, որ խոստացած էր Հիսուս Սուրբ Հոգիին առաքումով:

Եւ ահա ութ օր վերջ հրաշալի կերպով կատարվեցավ այս խոստումը: Միաշաբաթի առավոտուն Հոգին Սուրբ իջավ անոնց վրա, երբ անոնք կաղտթեին, վերնատունը լեցվեցավ անոր ներշնչող մթնոլորտով:

Աշակերտները խանդավառված սկսան խոսիլ մինչև այն ատեն իրենց չգիտցած լեզուններով, լեզուններովը այն երկրներուն, ուր պիտի երթային Ավետարանը քարոզելու, ինչպէս Թադեոս առաքյալ հայերենով:

Այս մեծ հրաշքէն հետո նախ Թադեոս, ապա Բարթողիմեոս մեկնեցան Հայոց աշխարհը և սկսան հոն քարոզել դեռ անգիր Ավետարանը:

Անտի և այլք, 2.000 տարիներ, այս հրաշքն է որ կկրկնվի Հայաստանի մեջ Արարատի փեշերուն տակ կառուցված նոր վերնատան՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մեջ:

1. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրութեան և օծման յոթներորդ տարեդարձին առթիվ:

Այս վերնատան կառուցման ձևը ինք Աստվածորդին Հիսուս Քրիստոս՝ Միածինը՝ տվավ, իր անվան ու հավատքին համար շարչարվող Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որու հետեանքով քրիստոնեութիւնը հալածող մեր Տրդատ Թագավորը դարձի գալով ջերմ պաշտպանը եղավ անոր: Եվ ահա Հայոց աշխարհին մեջ կառուցվեցավ մեր ազգային-եկեղեցական նոր Վերնատունը, Մայր Տաճարը՝ «Սուրբ Էջմիածին», խորհրդավոր ու փառավոր անունով, ուր նմանողությամբ կկրկնվի առաքելական վերնատան մեջ պատահած Սուրբ Հոգիի իջման մեծ հրաշքը:

Երջանկահիշատակ խորհն կաթողիկոսի վախճանումէն հետո մոտ յոթը տարիներ թափուր էր մնացած Հայոց Հայրապետական Աթոռը: Վերջին տարիներուն բոլորիս հայտնի քաղաքական դեպքեր պատճառ եղած էին այս անսիրելի հապաղումին:

Հազիվ թե այս անախորժ կացութիւնը մի քիչ մեղմացած, հրավեր եղավ Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռին անձնվեր պահապան՝ Տեղակալ Սրբազանէն աշխարհի ամեն կողմերը ցրված և եկեղեցական կազմակերպութիւն ունեցող հայերուն, որպեսզի իրենց ներկայացուցիչներն ընտրելով դրկեն Հայաստան՝ Էջմիածին, ընտրելու համար ազգին Կաթողիկոսը:

Կատարվեցավ այս հրամանը: Խորհրդային մեծ Միութիւնը ոչ միայն արտոնեց անոնց ամեն մեկուն ազատ մուտքը իր սահմաններէն ներս, դեպի Սուրբ Էջմիածին, այլև ճանապարհին ամեն դուրսութիւն և սքանչելի հյուրասիրութիւն ցույց տալով տարավ զիրենք իրենց Հայրենիքը՝ Հայաստան, ոմանց փառավոր օղանավ ալ տրամադրելով: Այսպէս ուրախ սրտերով ու

զվարթ տրամադրություններով աշխարհի ամեն կողմերին հոն հասան 115-ի չափ եկեղեցական և աշխարհական պատգամավորներ:

Այս առթիվ տեղի ունեցած այնքան լուրջ ու այնքան պատկառելի համազգային ժողովներին վերջ 1945 հունիս 23-ին շաբաթ կեսօրին վերջ, անոնք երկյուղածությամբ առաջնորդվեցան Մայր Տաճար, մեր ազգային-եկեղեցական Վերնատունը երկնապարգև, Սուրբ Էջմիածին, և իրենց անունները մի առ մի ստորագրելով ներկայության տոմարին մեջ, գրավեցին իրենց տեղերը կարգով:

Ապա լսեցին ու կրկնեցին ուխտի բանաձևը թե հավատարմությամբ և խղճի մտռոյ պիտի քվեարկեն:

Նորին Սուրբ Օծովյուն Մեծի Տանն Կիլիկիո ալեհեր Հայրապետը, որպես նախագահը այս զգայացունց ժողովին՝ Լուսավորչյան երևութով, պատկառազու, խորխոտ առդանովյամբ արտասանեց տերունական աղոթքը: Հետ որոշ ունկնդիր եղան սուրբ-գրական ընտրված հոգեշունչ աղոթքներուն, խոր լուծվան մեջ:

Մենք կզգայինք թե կայրեինք հայոց ազգային-եկեղեցական Վերնատան մեջ, ուր կզտնվի Լուսավորչի տեսիլքը, Միածինը ունի ուսամբ կզարնե ու կրախն գետինը սանդարամետին, կանգուն ու պայծառ պահելու համար այս քրիստոսաշնորհ հաստատությունը, Եկեղեցին Հայաստանյայց, որու «ղծխքի դռներն» անգամ չեն կարողացած վնասել: Մթնոլորտը բյուրեղացած էր հոգեվոր խորհուրդով: «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» սրբազան կոչը կարճագանքեր սրտե ի սիրտ, հոգին հոգի:

Դիվանի պաշտոնյաներին մեկուն հրավերով պատգամավորները կարգով ու ակնածանքով մոտենալով դրին իրենց քվեները կնքված սնտուկին մեջ: Ապա նախագահին հրամանավ ըացվեցավ ան և որոշված երկու անձերու կողմանե մեկմեկ կարդացվեցան քվեները. բոլորն ալ «միախոհ և միակրօն» տրված էին այն անձնավորության, որ այսօր յոթն տարիներե ի վեր Աստուծո կամքով Հայրապետն է Ամենայն Հայոց և Հովվապետը արժանավոր:

Բացվեցան դռները Մայր Տաճարին, դանդակներն սկսան դողանջել, իրենց ձայնը հասցնելով մինչև Արարատյան դաշտի հեռունները, ողջունելով Հոփսիմեի, Գայանեի, Շողակաթի լուսկյաց սրբավայրերը: Ժողովուրդը խռնվեցավ ընդարձակ քակին մեջ, և թափորը կազմված պատգամավորներն՝ ցնծովյամբ երգելով «Էջ Միածինն ի

Հօրէ և լոյս փառաց ընդ նմա», ճիշտ իր տեղին սկսավ շարժիլ դեպի Վեհարան՝ կամաց քայլերով: Նոր Հայրապետը շուրջառավոր, խաչ դավազան ի ձեռին, շրջապատված եկեղեցական հայրերի, կհառաջանար խանդավառ ժողովուրդին մեջեն, աջ ու ձախ տալով անոնց իր անդրանիկ օրհնությունները:

Վեհարանի ընդունելության սրահին մեջ Վեհափառի օրհնությամբ վերջացավ պատմականորեն աննախընթաց այս ընտրությունը:

Հաջորդ օրը, 1945 հունիս 24, կիրակի առավոտյան սուրբ պատարագին, որ մատույց նորընտիր Կաթողիկոսն Ամենայն Հայոց, արժանընտիր հաջորդը Սուրբ Գրիգոր Լուսավորչին, կատարվեցավ անոր օծումը, այնքան հուզիչ ու տպավորիչ արարողությամբ մը, որ ունի միայն Եկեղեցին Հայաստանյայց, և որ տեղի կունենա միայն Հայոց Մայր Տաճարի մեջ ի Սուրբ Էջմիածին:

Նախանձելի բախտավորությունը ունեցանք ականատեսն ըլլալու այն անզուգական արարողության, երբ բեմին վրա նորընտիր Հայրապետը դեմքը ժողովուրդին դարձուցած, ծնրադիր, գլուխը ծածկված այդ պահուն հատուկ թանկագին ու շքեղ քողով մը, երկարած մինչև գետին, Տ. Գարեգին Հայրապետը՝ Մեծի Տանն Կիլիկիո, շրջապատված մի քանի եպիսկոպոսներով, բոլորն ալ ծանրագին զգեստավորյալ, մյուսուսմաթափ աղավաղին ի ձեռին, եկեղեցական դասով միասին «Առաքելոյ Աղանույ» ներշնչող շարականի երգեցողությամբ, սրբալույս մյուսոնը կհեղուկը անոր գագաթին:

Բազմահազար հավատացյալներու աչքերով անթթիթ, հավատքով ու խորհուրդով միաբան՝ կդիտեինք ու կօրհնեինք այս պահը հրաշալի, որուն արժանի եղած էինք, մեր ազգային-եկեղեցական Վերնատան մեջ, որ «Էջմիածինն» էր:

Հայոց Հայրապետը իր այս դիրքին մեջ, քիչ մը անդին սքանչելի Արարատ իր գագաթը ձյունափայլ քողով ծածկված՝ կարծես իրարու հետ կհաղորդակցեին, իրար կլրացնեին հայկական կյանքի և պատմության դարերու հեռավորությունն եկած իրենց անմեռ հիշատակներով: Կաթողիկոսը կխոսեր լեռնյայն. «Ես կուզամ Լուսավորչին, որպես 129-րդ հաջորդը անոր: Ո՛վ դուք հավատալովոր զավակներդ Լուսավորչին, պահեցեք Ձեր հավատքը, որ Լուսավորիչ առավ Միածինն ու տվավ ձեզի»:

Արարատը կբարբառեր անխոս. «Ո՛վ հայորդիներ, ես խորհրդանշին եմ Հայոց աշխարհին: Ձիս տեսան ու ինձմով ներշնչվե-

ցան Հայկեր ու Արամներ, Վարդաններ ու Վահաններ, Սահակներ ու Մեսրոպներ, անոնց սերն ու հայրենասիրությունը ըրեք ձեր կյանքի ուղեցույցը, ինձ մով խանդավառվեցեք, ինչպես ձեր նախահայրերը բովառվեցեք, ինչպես ձեր նախահայրերը բովառվեցեք:— Ձեր եկեղեցիի գլուխը Սուրբ Եջմիածինն է Հիսուս Քրիստոսով: Ձեր Հայրենիքը՝ Հայաստան, երկնամերձ Արարատով:

Այս մտածմունքներով ու խորհուրդներով կդիտեինք ու կվայելեինք շնորհազեղ մյուսնում օծումը մեր Վեհափառ Հայրապետին՝ իր վեհատեսիլ փառքերուն մեջ, մինչ մի քանի խոշոր մեքենաներով քանի մը կողմերին կառնվեին պատկերները այս գեղեցիկ տեսարաններուն:

Այսպես կատարվեցավ կաթողիկոսական օծման հանդիսությունը՝ համակելով հսկա բազմությունը հոգեկան գոհունակությամբ և ազգային խանդավառությամբ, և ի մեծ գոհունակություն Հայրենիքի և Սփյուռքի մեջ ցրուցած պանդուխտ հայություն:

Վեհափառ Հայրապետը քանի մը օրեր հանգիստ ընելով կազդուրվելէ հետո, հաջորդ կիրակի՝ հուլիս 1-ին կատարեց տասն եպիսկոպոսներու իր անդրանիկ ձեռնադրությունը, նույնքան փառավոր հանդիսու-

թյամբ ու աշխուժով, որուն ներկա էր դարձալ մեծ բազմություն մը Երևանին, Վաղարշապատին և մերձակա նորաշեն ավաններին:

Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գևորգ Զ. ի դահակություն 7-րդ տարին ահա լրացավ, տարիքն ալ կարծեմ կմոտենա 85-ի: Արդյո՞ք յնթր տարի ևս պիտի շնորհե՞՞ Տերը, որ ապրի նա, գործն լոկի, աղոթն և տեսնն պսակվիլը իր մեծ բաղձանքներուն, որոնց գլխավորներն են ընդարձակումը հայրենի հողերուն, վերստացումը Արարատին և համերաշխ գործակցությունը և միաբանությունը իր հոգևոր հարազատներուն:

Երբ միևնույն ժամանակ Մեծի Տանն Կիլիկիո ազգանվեր հայրապետի՝ Տ. Տ. Գաբրիելի Հովսեփյանի բազմադյուն և լուսնափյուն կյանքի արևը Արևմտյան հորիզոնին վրա մարը մտավ, իրավամբ կարժե աղաղակել. «Տէր տեսցէ և այց արասցէ» մեր հոգերուն և ցավերուն:

Անմոռաց հիշենք մեր ազգային-եկեղեցական Վերնատունը, երբ կաղոթենք երգելով. «Թագաւոր երկնաւոր, զՍկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանող քում պահեա՝ ի խաղաղութեան»:

(Արտատպված «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթից)

